

տութեան նախնական կապ մը), ըլլայ միեւնոյն հողի վրայ բնակւող անհատներու միացումը, որոնք միեւնոյն լեզուն կը խօսին ևայլն.) ցեղ մը (une tribu) կրնայ իր մէջ խառնելով միացրնել բլաններու եւ բնականի խումբերու որոշ քանակ մը: Ահա թէ ինչո՞ւ ցեղերը, նախարարութիւնները, աշխրթապետութիւնները, տէրէպէյութիւնը կիսանկախ պետական ձևեր են կանոնաւոր պետութիւններու մէջ:

Ք Ի Ի Ր Դ Մ Ի Ր Ո Ի Թ Ի Ի Ն (*)

(Նախկին նախարարութիւններու եղծեալ վիճակը կամ
բաւ թիւրքերու Տեքէպէյութիւն.)

Օսմանցիներու ու պարսիկներու յաջորդական պատերազմներու ու փոփոխակի արշաւանքներու մէջ, Հայաստանն ու Քիւրդիստանը դարձեալ նախարարական իշխանութիւններու կը վերածուին, բայց եղծեալ վիճակի մէջ, այսինքն Տէրէ-Պէյութեան:

Տէրէ-Պէյի կը նշանակէ Հովտի-իշխան.—Շրջանաւայրի մը տիրապետութիւն, ուր կամփոփուի իշխանիկ մը կամ պէյ մը, որ իր դրից շնորհիւ միշտ կուռի մէջ ըլլալով կը պաշտպանէ իր միջավայրը անոր անկախութեան մէջ, բացասելով ո՛ր է է տիրող իշխանութեան:

Մինք մեր պատմութեան ընթացքին տեսանք, որ ըստ Խորենացւոյ՝ Հայոց Վաղարշակ թագուորն եղաւ առաջին անգամ հայոց նախարարութիւնները ինչպէս և Մարաց գաղթականութեան նախարարութիւնը իր գահին շուրջ հաւաքողը ու

(*) Տես «Սասունի Ամիրայութիւնը» քաղուած Հայ պատմութենէն, ուր արդէն կազմուած կ'երևան անկախ մեծ ու փոքր իշխանութիւններ: